նոցա հետ ունեցած յարաբերութիւնն ալ ունի իւր որոշ սահմանը ։

Սոյն որոշեալ քիչ են մեր պարտքե֊րը՝ ուստի մեղք ու ամօթ է անկատար թողուլ զանոնք. և անոնց կատարումը պէտք է լինի բնականապէս խղճմտան֊քով և առանց խտութեան ։

Մեր անձը պաշտպանելու համար ի֊րաւունք ունի՛մք վնասակար կենդանի֊ները մեռցնելու. մեղք չէ մորթել այն֊պիսիները, որ հարկաւոր են մեզ կերա֊կրոյ, հագուստի, մոմ բանիւ երկարա֊ւոր կեանքի կարևոր պիտոյքները լեցը֊նելու համար ։ Բայց միթէ իրաւունք ունի՞մք առանց ստիպողական պատճառի չարչարել նաև զանոնք կամ առանց խղճի սպանել միայն վայրկենական զու֊արճութեան համար. իրաւունք ունի՞մք նոյն իսկ վնասակար և վտանգաւոր կեն֊դանիներուն, մեր զբօսանքին համար ըս֊պանութեան նորանոր և սարսափելի հը֊նարքներ մտածել և սխրժիլ տեսնե֊լով նոցա մահուանէ առաջ կրած սոս֊կալի չարչարանքները ։ Խղճմտանքը մեզ կ՚պատուիրէ որչափ կարելի է շուտացը֊նել և թեթևցընել կենդանեաց մահը ։

(շարունակելի)

---

Նոր տարւոյ աւթիւ՝ կաղանդի ա֊ռաջին իրիկուն՝ մինչդեռ ըստ նախնի սո֊վորութեան (1) համայն միաբանութիւն Ս. Աթոռոյս՝ եպիսկոպոսունք, վարդա֊պետք, սարկաւագունք և դպիրք, ևս և աշխարհական աստիճանաւորք և պաշ֊տօնատարք դիւանատան Սինօդի և կա֊ւառար դատարանի Էջմիածնայ գաւա֊ռի՝ ժողովուած էին 'ի սրահ Վեհափա֊ռի՝ Նորին Սրբազնագոյն Վեհափառու֊թեան՝ Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ Նոր տարին շնորհաւորելու և իւրեանց որդիական ջերմեռանդն մեծարանք և հպատակութիւնը յայտնելու համար, բոլոր աշակերտք ժառանգաւորաց վար֊ժարանի Ս. Աթոռոյս իւրեանց դաս֊տուաց և դաստիարակաց հետ 'ի միա֊սին՝ ներկայացան Նորին Վեհափառու֊թեան. Նա 'ի նոյանէ երկու պատա֊նիք 'ի դիմաց ընկերաց գրաւոր ուղերձ֊ներ նուիրեցին Վեհափառ Հայրապե֊տին. իսկ միւսն հանդիսին մէջ ընթերցա֊ւ իւր ճառը ։ Վեհ. Կաթողիկոսը քաջա֊լերեց աշակերտները ասելով թէ. ,,ու֊սման ասպարէզը բաց է ձեր առջև. այժմ ունիք բարեկիրթ վարժապետներ. և ինչպէս որ ձեր ընկերաց ճառախօսու֊թեան մէջ կերևի, ձեր ուսումնասի֊րութիւնը օր ըստ օրէ կաճի, ես ևս կը ցանկամ որ նոր տարւոյն հետ նոր պտուղներ ցուցանէք ուսման և բարո֊յականութեան մէջ ։‘‘

Կարդացուած ճառերը արժան կը համարիմք տպագրել՝ նախ՝ ի խրախոյս նոցա աշխատասէր հեղինակաց և երկ֊րորդ՝ ի տեղեկութիւն Ազգիս թէ՝ որ֊չափ արթնցած են Ս. Աթոռոյս ժառան֊

---

1) Ինչպէս նաև վեհափառին սրահը պտղեղինաց և մրգեղինաց և այլն սեղան մի պատրաստելով, նա֊խագահութեամբ Վեհ. Կաթողիկոսի եկողները սակայն ինչ կը վայելեն սեղանի պատրաստութիւն֊ներէն, ևս բարեմաղթութիւններէն զկնի իւրաքան֊չիւրը կը վերադառնայ իր հանգստարանը ։

գաւորաց Դպրոցի աշակերտաց մտքե-րը և սրտից փափաքը ուսումնասիրու-թեան. տեսնելով որ հետզհետէ լեզ-ուաց և կարևոր առարկայից դասատու-ներ նշանակուեցան յԱզգասէր Մեծ. Կաթողիկոսէն ամենայն Հայոց։

Նաև սուրբ Ծննդեան ճրագալուցի իրիկուն Ս. Միաբանութեան սեղանա-տան մէջ մի ճաշ, և առաւօտուն Մեծ. Կաթողիկոսի Ներկայութեան եր-կու ճառեր կարդացուեցան. զորոնք ևս յաջորդ ամսագրոյս միջոցաւ ու-նինք հրատարակել։

---

# Աստուածարեալ Մեծափառ Հայրապետ և սրբագումար սրբազան Հարց.

„Շնորհաւոր Նոր տարի և բարի Կաղանդ..

Բոլորեցաւ փութախաղաց Նոր ամ մերոց կարճ կենաց,
    և հոլովեալ գլնդմամբ իւր ի շրջան իւր վաղվաղենոյ.
    զքանի բերկրանս հոգեզուարճ կնքեաց ի մերս նա ճակատ,
    և զեռ որքան խնդից պատճառ էջ յաջորդն հարազատ։
Այսպէս նաև ուեգակ ձոխ գարնանային լընուխեան,
    թէ և անդուր ի մի ծաղկէ գփոյլս նշուլից կենսական.
    բայց յամառն ախոռեալ աշտն հանդէպ լուսոյն գլորութիւն,
    առ գաւառք փորձէ փոստակս երկրագործաց նաևանգուն,
Եթէ բնութիւն յանձրաւ կացեալ ծաղկան լուսոյ Արեգին,
    հետ զհետէ զուղ լուղորդ պաճի ի գանձուք թանկագին.
    ի ժամանել մաղթանաց ի կէտ լրման տարւոյն Նոր,
    որչափ արարոյն զհրճուանս հոգւոյ զզեստ կարեաց նորանոր։
Նպարիզ մեծ և անզգաստ խափուր խոշեալ ի վաղուց,
    ի փոփոխմանց մշակաց նախնի յԱստուածաշունչ ի զարդուց.
    այսօր զԱնհետ հրաւիրեն զի շնորհապարգև բաղդ գթով,
    ընդ Նոր տարւոյն սկիզբն տացեն և ձեռնարկք Նոր մեծագով.
Զերոց Վեհափառ Հայրապետ յաւէտ սթափիլ ի խինդ Արարատ,
    մաշագուշակ միւրխոր ի քնոյ ի կեանս ուրախ և աշխատ.
    և ընդ հասարակ մեծապարծ հարկանել քաղցր լղեշտակ,
    եթէ Որդիք Հայկազն զգեցան ընդ Նոր տարւոյն և Նոր կեանք։
Ընդ բաղդ եսես զալխաղհաղէն Վեհին չքնաղ ըղձեալդ.
    զի քրիստոնէութեան ցանկոյն մեծ քե ընկալաւ ըղձոյ կարգ.
    և արտասուք մաղթանք Հայոց վերառնոգան ի յերկեր,
    զի բաղձեալքն քեզ ողջունեալ նորոց եղիցեն զեկիր աւեր։
Ընդ ամենայն հանդիսաւոր ձգանց Վեհին եռանդուն,
    ի փարատել զձայն որդւոց զմնաց անդորր մթութիւն.
    ո՛ Հայր մեր Վեհ, և այսպէս ցուցցէ զարդիւնս բաղմաշխատ։